ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «21» Նոյեմբերի 2019թ.

2019թ-ի նոյեմբերի 18-21-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162** ծածկագրով (*բեռնափոխադրման ծառայություններ*) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Բաղդասարյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ֆինանսական տնօրեն.
Ս. Չիդեմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ.
Հ. Զորջալյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՄԲ-ի մաքսազերծման գծով մասնագետ.
Ա. Սարգսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի արտասահմանյան գնումների գծով բաժնի պետի տեղակալ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.
Ա. Վարդապետյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Իրավապայմանագրային բաժնի պետ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ

ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Բաղդասարյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացրած անձի, վերջինիս կողմից ներկայացված հայտի գնահատման և առաջարկված գնի մասին:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ, ՎԵՐՋԻՆԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Ա. Բաղդասարյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1	Բեռնափոխադրում	4 497 780

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162 ծածկագրով գնման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ին, ժամը «17:30»-ին:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և պատասխաններ չեն գրանցվել:

ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու հայտ է ներկայացրել հետևյալ անձը /այսուհետ՝ նաև մասնակիցը/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ. փոստ
1	Յունիտրանս ՍՊԸ	-	unitrans@netsys.am

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցը հայտը կազմել և ներկայացրել է ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է մասնակցի կողմից փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրելու լիազորություն ունեցող անձի՝ լիազորագիրը:

• Մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված գնային առաջարկը չի համապատասխանում Հրավերով սահմանված վավերապայմաններին, մասնավորապես ՝ լրացված չէ չափաբաժնի անվանումը, ինչպես նաև «Յունիտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում տառերով և թվերով գրված գումարների միջև առկա է անհամապատասխանություն.

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ ներկայացրած մասնակցի գնային առաջարկը՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի և մասնակցի զբաղեցրած տեղերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Չափաբաժնի համարը	Մասնակցի		Մասնակիցների առաջարկած գները՝	
	Զբաղեցրած տեղ	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	-	«Յունիտրանս» ՍՊԸ	4000896	4000896

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:
2. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել «Յունիտրանս» ՍՊԸ-ին շտկել արձանագրված անհամապատասխանությունը 1 աշխատանքային օրվա ընթացքում:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովն արձանագրեց, որ

• «Յունիտրանս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում լրացրել է բացակայող փաստաթուղթը:

Որոշվեց՝

1. «Յունիտրանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:
2. Ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել **ԵՋԷԿ-ԳՀԾՁԲ-19/162** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է:

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Հարցը հանվել է

Կողմ՝ 6
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Բաղդասարյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան _____

Հ. Զորջալյան _____

Ա. Սարգսյան _____

Ա. Պետրոսյան _____

Ա. Վարդապետյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____